

տակետի: 8 Սոյնպէս եւ գլխատակս թագաւորին Տրդատայ թէ կամաք թէ ա-
կամայ, որ արժանին լեալ էր նախածանաւթ ի Զրիստոսն հաւատոց: 9 Վասն
այսորիկ կամ եղեւ աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկո-
պոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եղեալն էին. զի սիրելի էր աշխար-
հին՝ պատուիլ զյառաջընծայն Զրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ:
10 Նոյնպէս եւ զյառաջեպիսկոպոսն¹ զնախավաստակն Գրիգորիս. սոյնպէս
եւ ի գաւառն այրարատեան զնախավկայսն Զրիստոսի, ուր Գայիանէն եւ
Յովսէփմէն կային, իւրեանց հանդերձ գործակցաւքն. սոյնպէս առաւել եւ
զնախեկեղեցին:

11 Այս տեղիքս սմա էին յանձն հանդերձ գաւառաւքն յորս էին. հաւատա-
րիմ էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանութեան աթոռոյն հայրապե-
տացն, հաստատութեան ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն: 12 Եւ էր սորա ըն-
կալեալ զքորեպիսկոպոսութեան ձեռնադրութիւն աստիճանին ի ձեռաց մե-
ծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զբազինս մեհենիցն Յերակլեայ,
այս ինքն Վահագնի, որում տեղոյ Աշտիշատն կարդացեալ. ուր նախ եղ զհի-
մունս եկեղեցւոյ սրբոյ:

13 Եւ էր սա այր զարմանալի, առնէր նշանս եւ զաւրութիւնս մեծամեծս
յանուն Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի: 14 Սա եւ կաւշկաւք քայլելոյն
զնայր ի վերայ ջուրց գետոց, եւ ոչ թանային. եւ ոչ հանէր սա: 15 Եւ յաւուրս
ձմերանոյն՝ յորժամ կուտեալ դիզեալ զմեծութիւն բազմութիւն թանձրու-
թեան ձեանցն կուտակեալ հիւս² ձեանցն ի վերայ ձմերային լերանցն՝ յայն-
պիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամեր ուրեք երթալ ի պետս
ճանապարհի, յանկածաւրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա: 16 Եւ
զի կամեր ի հեռաստան ուրեք երթալ, իբրեւ զփայլակն սլացեալ լինէր անաշ-
խատ. իբրեւ թռուցեալ յոր կամերն երթալ ի տեղին, յանկարծաւրէն անդ
գտանէր: 17 Յարուցանէր զմեռեալս, առնէր եւ բժշկութիւնս հիւանդաց, եւ
այլ եւս մեծ նշանս եւ զաւրութիւնս քան զնոյնս գործեր, զորս ոչ բաւեսցէ ընդ
գրով նշմարանաց փակել: 18 Եւ բնակութիւն իւրոց կայենիցն յանմարդի լե-
րինս, այլ զտեսչութիւն մարդկան պիտոյից ոչ երբէք անփոյթ առնէր:
19 Միահանդերձ մաշկանափորտն սանդաղաւոր, եւ կերակուր իւր արմատք
բանջարոց, եւ գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր: 20 Եւ առ բանն Աս-
տուծոյ այնչափ էր հզաւր, զի զինչ հայցերն յԱստուծոյ՝ առնոյր, եւ զոր ինչ ա-
սեր՝ այն լինէր: 21 Եւ կայեանք տեսչութեան իւրոյ, յորժամ յանապատաց ի
շէնս իջանէր վասն գործոյ Աստուծոյ, ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր:
22 Եւ յաճախ յակն աղբերն ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Յերակ-

1 *Յորին. միում* զառաջին եպիսկոպոսապետն... Գրիգորիս

2 *Յոր.* հիւսեալ